ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀՀ-ի ՕՐԻՆԱԿՈՎ

Քոչարյան Ներսես
Սոցիոլոգիայի մագիստրոս

Կայուն զարգացման նպատակների 10.7-րդ նպատակում մարդկությունը հայտարարեց, որ անհրաժեշտ է. «Նպաստել մարդկանց կանոնավոր, անվտանգ, օրինական և պատասխանատու միգրացիային և շարժունակությանը, այդ թվում՝ պլանավորված և լավ մշակված միգրացիոն քաղաքականության իրականացման միջոցով»[1]: Սակայն 21-րդ դարից ի վեր միգրացիան դարձել է համաշխարհային մարտահրավերներից մեկը՝ առաջացնելով մի կողմից՝ որակյալ աշխատանքային ռեսուրսների հասանելիություն, մյուս կողմից՝ բազում դեմոգրաֆիական, տնտեսական, միջմշակութային և այլ հիմնախնդիրներ:

Նախկին պատճառներին (պատերազմ, տնտեսական անկայունություն) զուգահեռ՝ ընթացիկ տասնամյակը միգրացիայի նոր խթան է հաղորդել կլիմայական աղետների աճող ագրեսիվության պատճառով, ինչի արդյունքում լրատվամիջոցներում հայտնվեց «կլիմայական միգրացիա» եզրույթը: Կլիմայական աղետների աճող մասշտաբները՝ ջերմային ալիքներ, երկրաշարժեր, երաշտներ, անտառների հրդեհներ և ջրհեղեղներ, հուշում են, որ կլիմայական միգրացիան կարող է դառնալ գլոբալ միգրացիայի հիմնական «շարժիչը»: Օրինակ Հայաստանում 1988թ. դեկտեմբերի աղետալի երկրաշարժը հանգեցրեց միգրացիոն ակտիվության աճին. մարդիկ աղետի շրջաններից տեղափոխվեցին Խորհրդային Միության խոշոր քաղաքներ[2]:

Ներկայում զգալի ներդրում է ունեցել նաև COVID-19 համավարակը, որն առաջին հայացքից միայն սահմանափակեց մարդկանց զանգվածային տեղաշարժը, բայց փաստացիորեն COVID-19-ը զգալի անկում առաջացրեց համաշխարհային տնտեսության մեջ, ինչը չէր կարող չառաջացնել աշխատանքային միգրացիայի նոր ալիքներ: Եվ

---

[1] «The Global Goals For Sustainable Development»: https://www.globalgoals.org/:

[2] Մանրամասն տե՛ս Еганян Р., Интеграция мигрантов: армянские реалии, Научно-исследовательский отчет 2013/07 CARIM-East RR 2013/07, Robert Schuman Centre for Advanced Studies, San Domenico di Fiesole (FI): European University Institute, 2013.
https://cadmus.eui.eu/bitstream/handle/1814/27867/CARIM-East_RR-2013-07.pdf?sequence=1.

բնականաբար, երիտասարդ սերունդը՝ 19-34 տարեկան տղամարդիկ և կանայք, նույնպես հայտնվել են համաշխարհային միգրացիայի հորձանուտում:

Հայաստանում, ի տարբերություն հետխորհրդային տարածքի մյուս հանրապետությունների, ակտիվ միգրացիոն գործընթացները սկսվել են դեռևս 1980-ականների վերջին. մենք տարիներ շարունակ ունեցել ենք աշխատուժի ավելցուկ և մեզանում առկա էր ճոճանակային կամ սեզոնային միգրացիայի երևույթ[3]: Միգրացիոն գործընթացները հետխորհրդային շրջանի Հայաստանում պայմանականորեն բաժանվում են երեք փուլի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված ինչպես երկրի ընդհանուր իրավիճակով, այնպես էլ միգրացիոն գործընթացների բնույթով: Միգրացիայի **առաջին փուլն** ընդգրկում է 1990-2008թթ. ժամանակահատվածը՝ նորանկախ պետականություն, ռազմական գործողություններ, տնտեսական շրջափակում և այլն: **Երկրորդ փուլը** սկսվում է 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամով՝ մինչև 2015թ. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը, ինչը **Երրորդ փուլի** սկիզբն է, որը և շարունակվում է մինչ այսօր:

Պատմականորեն Եվրոպական տարածաշրջանում ազգային պետությունների ձևավորման և ամրապնդման գործում մեծ դրական դեր խաղաց մանր իշխանական պետությունների միջև մաքսատուրքերի վերացման և կապիտալիստական հարաբերությունների զարգացման միասնական տնտեսական դաշտի ձևավորման գործընթացը: Իսկ երկու դար անց համանման իրավիճակ ստեղծվեց համաշխարհային ֆինանսական համակարգում: Երկու համաշխարհային պատերազմների ցնցումները հանգեցրին նրան, որ 1944թ. Բրետոն Վուդսի կոնֆերանսում *The United Nations Monetary and Financial Conference* ստեղծվեց նոր՝ համաշխարհային ֆինանսական համակարգը[4]: Այսպես, Նոբելյան մրցանակակիր Ջոզեֆ Ստիգլիցը, համաշխարհային ճգնաժամի

---

[3] Միգրացիոն փուլերի մասին մանրամասն տե՛ս Migration and skills in Armenia results of the 2011/12 migration survey on the relationship between skills, migration and development, CRRC, Y., 2012, p.9 https://www.etf.europa.eu/sites/default/files/m/9D759BA5148D99FBC1257B730046F443_Migration&skills_Armenia.pdf.

[4] Տե՛ս 1944թ. Բրետոն Վուդսի միջազգային կոնֆերանսի արդյունքների մասին մանրամասն https://pubdocs.worldbank.org/en/189461602747066115/World-Bank-Group-Archives-Folder-1849644.pdf?redirect=no.

սկզբին նվիրված համաժողովում ուղղակիորեն մատնանշեց, որ հենց ապականոնակարգավորման և լիբերալիզացման քաղաքականությունն էր «2008 թվականի ճգնաժամի և դրա արագ տարածման հիմնական պատճառն ամբողջ աշխարհում»[5]: Այդպիսով, ֆինանսական համակարգերը դուրս են եկել ազգային տնտեսական ենթակայությունից և պետական վերահսկողությունից, դրանով իսկ ապահովելով տնտեսական գործընթացների և ազգային կառավարությունների գործունեության վրա ճնշում գործադրելու հնարավորություններ: Տնտեսական հետամնացության և ֆինանսական կախվածության արատավոր շրջանից դուրս գալու հույսը գնալով մարում ու ավելի անհասանելի է դառնում: Այդ երկրների դասին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Քաղաքական և տնտեսական փոփոխություններով պայմանավորված՝ Հայաստանից միգրացիան կտրուկ աճեց առաջին փուլում (1990-2008թթ.)՝ ավերիչ երկրաշարժ, ղարաբաղյան պատերազմ, տնտեսական և էներգետիկ ճգնաժամ: Չունենալով եկամտի և ապրուստի աղբյուներ՝ սովից և աղքատությունից խուսափելու համար բնակչության զգալի մասը ստեղծված իրավիճակից միակ ելք էր տեսնում արտագաղթը: Հայ սոցիոլոգ Գ. Պողոսյանը, որպես արտագաղթի հիմնական պատճառ նշում է աշխատատեղերի կտրուկ կրճատումը, տնտեսական ճգնաժամը և կենսամակարդակի անկումը[6]:

ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ Հայաստանից միգրացիայի կտրուկ աճ է գրանցվել 1991-1995թթ.՝ Հայաստանը լքել էին մոտ 900 հազար մարդ: Հայաստանում արտագաղթի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1993-94թթ.: Միայն 1993թ. հանրապետությունից հեռացել է 306 հազար մարդ, 1994թ.՝ 205 հազար մարդ, 1995 թ.՝ 138 հազար մարդ[7]: Հաշվի առնելով, որ 1989թ. մարդահամարի համաձայն Հայաստանի բնակչությունը կազմում էր 3 304 700 մարդ, կարելի է ամ-

---

[5] Стиглиц Дж., Доклад о реформе международной валютно-финансовой системы: уроки глобального кризиса. М.: «Международные отношения», 2010, С.23.

[6] Погосян Г., Анализ миграционных потоков в Армении // Транзитная миграция и транзитные страны: Теория, практика и политика регулирования (под ред. И.Молодиковой, Ф.Дювеля). М.: Университетская книга, 2009, С. 197.

[7] Տե՛ս Миграционное сотрудничество Армении с Европейским Союзом и Евразийским экономическим союзом, Чобанян А., Июнь 2020.
https://www.icmpd.org/file/download/48147/file/Policy%2520Brief_%2520Armenia%2527s%2520migration%2520cooperation%2520with%2520the%2520European%2520Union%2520and%2520Eurasian%2520Economic%2520Union%2520RUS.pdf

րագրել, որ 1991-95թթ. ՀՀ-ը լքել է բնակչության մոտ 1/3-ը[8]: Միգրացիայի աշխարհագրական կառուցվածքը 1991-1995թթ. ուներ հետևյալ տեսքը. 67%-ը մեկնել է ՌԴ, 9%-ը՝ հետխորհրդային այլ հանրապետություններ, 14%-ը՝ ԱՄՆ, Եվրոպա, Կանադա և 10%-ը՝ չճշտված ուղղությամբ[9]: Այսպիսով, այդ ժամանակահատվածի համար հիմնական արտագաղթի երկիրը հանդիսանում էր ՌԴ, ինչն ուներ պատմական, կրթամշակութային և լեզվի իմացության հիմքեր:

Մեզանում հատկապես նշանակալի է «գիտական արտագաղթը» կամ «ուղեղների արտահոսքը»: «Ուղեղների արտահոսքի» գործընթացը, բառի նեղ իմաստով, կարելի է սահմանել որպես «գիտական և դասախոսական կազմի, ուսանողների, ասպիրանտների, բարձր և բարձրագույն որակավորում ունեցող մարդկանց հոսք, այսինքն աշխատողներ, որոնք փաստացի կամ պոտենցիալ ներգրավված են գիտական հետազոտության և մշակման աշխատանքներին[10]: «Ուղեղների արտահոսքը» լուրջ խնդիր է Հայաստանի համար, որն իրենում ներառում է ոչ միայն գիտական էլիտայի ներկայացուցիչների արտագաղթը, այլև այն «գիտական ռեսուրսի արտագաղթ», որի հիմնական բաղադրիչը երիտասարդությունն է:

Երիտասարդությունը կարևոր տեղ է զբաղեցնում սոցիալական հարաբերություններում, նյութական և հոգևոր հարստության արտադրությունում: Հասարակության մեջ նրա դիրքը և ստեղծարար գործունեության մասնակցության աստիճանը ուղղակիորեն կախված են հասարակության և պետության գործառնությունից: Բոլորը համաձայն են, որ հենց երիտասարդներն են մեր ապագան, որի համար արժե պայքարել: Այնուամենայնիվ, երիտասարդների միգրացիոն շարժումների վիճակագրությունը ցույց է տալիս, որ երիտասարդության զարգացմանն ուղղված ժամանակակից պետական քաղաքականության ծրագրերն այդքան էլ արդյունավետ չեն: Տարեցտարի միգրանտների թիվն ավելանում է. եթե 2000թ. աշխարհում պաշտոնապես գրանցված էր 150 միլիոն միջազգային միգրանտ, 2010թ-ին՝ 249 միլիոն, ա-

---

[8] Տե՛ս նույն տեղում:

[9] Տե՛ս Ժողովրդագրական իրավիճակը ՀՀ-ում, ՀՀ Վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/file/article/sv_12_21a_520_.pdf?fbclid=IwAR05GJScHvMSD-Q7UJYt0JtfhO8G1CViFjftX_nkiK9KOkkDhIc9qhUPFxA

[10] Տե՛ս Супян В., «Утечка умов»: мировые и российские тенденции // Человек и труд, 2003. №7, С. 40-43.

պա 2020թ-ին նրանց թիվը հասել է 281 միլիոնի[11]: Աշխատանքի միջազգային կազմակերպության փորձագետների տվյալներով 2010թ. միջազգային միգրանտների թվաքանակում երիտասարդների թիվը կազմել է 27 միլիոն մարդ, 2020թ.՝ արդեն 89 միլիոն: Փաստորեն, միգրանտների մեծամասնությունը 15-35տ. երիտասարդներ են՝ 31,7 %[12]: Եվ երիտասարդների միգրացիայի կարևոր գործոններից մեկն այն է, որ շատ երիտասարդ մասնագետներ՝ նույնիսկ բարձրագույն կրթությամբ, մնում են գործազուրկ՝ իրենց մասնագիտությամբ աշխատանք չունենալու պատճառով: Նման իրավիճակում հայտնված երիտասարդների մեծ մասը մեկնում է այլ երկրներ, որտեղ հասարակությունը հաղթահարում է այդ խնդիրը:

Դեռևս 2011թ. Հայաստանում անցկացված լայնածավալ սոցիոլոգիական հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ հարցված 18-30տ. երիտասարդներից, ովքեր ունեն բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն, գրեթե 40%-ը կցանկանար ընդմիշտ հեռանալ երկրից՝ ավելի լավ կյանքի ձգտումով[13]:

2021թ. ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Ժողովրդագրական հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ «Հայկական սփյուռքի սոցիալ-տնտեսական ներուժը ԵԱՏՄ-ում ինտեգրացիոն գործընթացների համատեքստում» նախագծի շրջանակներում անցկացրել է նաև սոցիոլոգիական հետազոտություն: Ըստ այդ հետազոտության շրջանակներում իրականացված փորձագիտական որակական հարցման արդյունքների, այն հարցին, թե՝ «Ռուսաստան մշտական բնակության կամ աշխատանք փնտրելու նպատակով Ձեր ընտանիքի անդամների կամ հարազատների տեղափոխվելուց,

---

[11] United Nations Department of Economic and Social Affairs, Population Division 2020. International Migrant Stock 2020. Workbook:
International_migrant_stock_by_sex_and_destination_2020.xlsx.
https://www.un.org/development/desa/pd/sites/www.un.org.development.desa.pd/files/undesa_pd_2020_international_migrant_stock_documentation.pdf

[12] Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) զեկույց 2020, Ժնև, https://publications.iom.int/system/files/pdf/final-wmr_2020-ru.pdf

[13] Տե՛ս Մանուկյան Ս., Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց. Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն; Երիտասարդական պրոբլեմների ուսումնասիրման ասոցիացիա. Եր., Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, 2012, մաս II, վերլուծական մաս:

որն՞ է եղել նրանց Ռուսաստան մեկնելու հիմնական պատճառները»՝ 14%-ը նշել է ուսում ստանալը կամ ուսումը շարունակելը, 24%-ը՝ մասնագիտական ինքնազարգացումը և կենսապայմանների բարելավումը: Երիտասարդ գիտնականների միգրացիոն ներուժը, ի համեմատ միջին և ավագ տարիքի սերնդի գիտնականների, բավականին բարձր է: Ավելի բարեկեցիկ, ապահով և ինքնադրսևորում հնարավորող կյանք փնտրելու շարժառիթը տարածված է թե հայ, թե այլազգի երիտասարդների շրջանում:

Անկանոն միգրացիան աղետ է ցանկացած հասարակության համար: Թվում է թե միգրանտների տնտեսական գործունեությունը և տրանսֆերները նպաստում են և՛ դոնոր, և՛ ընդունող երկրների զարգացման գործընթացին: Սակայն ավելի խորքային, ոչ մակերեսային վերլուծությունները փաստում են, որ երկրից առաջին հերթին հեռանում են ամենաակտիվ քաղաքացիները, ինչը կարող է հանգեցնել արտադրության, կրթության, գիտության, մշակույթի և այլ ոլորտների գործառնության և զարգացման նվազմանը, նույնիսկ դեգրադացմանը: Այստեղից հարց է ծագում՝ կա՞ արդյոք միգրացիայից օգուտ դոնոր երկրի բնակչության և կառավարման համակարգի համար, բացի հարազատներին ֆինանսական փոխանցումների հայտնի գործոնի:

Ի լրումն միգրացիոն խնդիրների լուծման բոլոր բազմաթիվ առաջարկների, ըստ իս, անհրաժեշտ է միջազգային օրենքի մակարդակով ընդունել հստակեցում՝ ***ընդունող երկրները պետք է կիսեն իրենց միգրացիայից ստացված եկամուտները դոնոր երկրների հետ:*** Ի վերջո, նույնիսկ հաշվի առնելով կազմակերպչական միջոցառումների համակարգերը և աշխատանքային միգրացիայի կարգավորման արդյունավետությունը, աշխատանքային միգրացիայի կիրառման վերջնական դրական ազդեցությունը տեսանելի և շոշափելի է նպատակակետ երկրի բյուջեում լրացուցիչ եկամտի մեծանալու արդյունքով: Դոնոր երկրները պետք է համագործակցեն ընդունող երկրների հետ՝ աշխատանքային միգրանտների համար արդյունավետ և արդար հավաքագրման համակարգեր մշակելու և օրենսդրորեն հաստատելու համար: Իսկ նպատակակետային ընդունող երկիրը պետք է իր բյուջեի այս հավելյալ գումարը փոխշահավետ պայմաններով կիսի դոնոր երկրի հետ:

Երիտասարդ միգրանտներն արժանի են առանձնահատուկ ուշադրության միջազգային աշխատանքային միգրացիայի ճիշտ և արդ-

յունավետ կազմակերպման միջոցով և այդտեսակ ու այդկերպ հմուտ աշխատանքն է ունակ ստանձնելու որոշիչ դեր՝ ապահովելու ինչպես նպատակակետ երկրների, այնպես էլ դոնոր երկրների կայուն տնտեսական զարգացումը տասնամյակներ շարունակ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գլոբալիզացման ժամանակաշրջանում միջազգային միգրացիոն գործընթացների ուսումնասիրությունը նշանակալի է ազգային և հատկապես փոքր, զարգացող երկրների միգրացիոն քաղաքականությունը մշակելու և դեմոգրաֆիական և այլ ռիսկերը կանխելու նպատակով: Հոդվածում հեղինակը վիճակագրական և սոցիոլոգիական հետազոտությունների երկրորդական վերլուծության մեթոդի կիրառությամբ կատարել է ուսումնասիրություն՝ ՀՀ-ի երիտասարդների ժամանակակից անկանոն միգրացիոն գործընթացների օրինակով:

Բանալի բառեր. միջազգային միգրացիա, աշխատանքային միգրացիա, երիտասարդ միգրանտ, ազգային միգրացիոն քաղաքականություն:

СОВРЕМЕННЫЕ НЕРЕГУЛИРУЕМЫЕ МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ МОЛОДЕЖИ: НА ПРИМЕРЕ РА

Кочарян Нерсес

Магистр социологии

РЕЗЮМЕ

В эпоху глобализации изучение международных миграционных процессов имеет важное значение для разработки миграционной политики национальных и особенно малых, развивающихся стран для предотвращения демографических и других рисков. В статье автор методом вторичного анализа статистических и социологических исследований представил современные нерегулируемые миграционные процессы молодежи на примере РА.

Ключевые слова: международная миграция, трудовая миграция, молодой мигрант, национальная миграционная политика.

MODERN IRREGULAR MIGRATION PROCESSES OF YOUNG PEOPLE: ON EXAMPLE OF RA

Nerses Kocharyan
MD in socioogy

SUMMARY

In the era of globalization, the study of international migration processes is important for the development of the migration policy of national and especially small, developing countries to prevent demographic and other risks. In the article, by the method of secondary analysis of statistical and sociological studies, the author presented modern unregulated migration processes of youth on the example of RA.

Key words: international migration, labor migration, young migrant, national migration policy.